47. ՏԱՓԱԿ ԱՐՏԵՆ ՄՈՍԻՆ

Ինիս ա̈, չինիս մին խան։ էտ ըպrես ա ինիս Ստըփնոցեն խո̈ւթո̈ւմը։ Մըհենգյ էլ էտ շենին տըեղը մա̈հըլըմ ա։ Մեr էս Տումա շենան էrկու վերստ հըեռե յա։*

Էտ խանը, հիշքան չըrչըrես ա ընիս ժուղուվուրթեն, էտ ո̈ւչա̈ն հերթեն, լոխ էլ խաի յըն ըլա̈լ ընես, ամմա էս մինը շատ փիսն ա իլա̈լ, շատ ա չըrչըrես իլա̈լ ժուղուվուրթեն։ Ըտrա նհետ մին տեղ, մին թա̈զա̈ օrենքյ էլ աr սըվըrեrալ։ Էտ թուrքեն խանը, վեr մինը կնեգյ չի ընե՛ս, սըվթա̈ քշեrը ինքյն ա նհետը քոն ընիս։

Համ էլ, գյիդա̈ս ը՞ս հինչ կա, լա̈վ ա մաrթըս քըշեr-ցիrեկ չըrչաrվե, քըրտընքե, տո̈ւզնը մընա, տկլոr մընա, թա̈քյ լհա̈ շըհիլին առաջին համավ թըքյա̈ն օrո̈ւշը հաrամ չանե։ Ըտrանա յըեrը փի՛ս պեն չիկա։ Ղոշշաղ տըղեն մատաղ ըմ է՛, մատաղ ըմ։

Էտ վախտը էտ Տափակ արտըմը ըլա̈ծ շենըմը Հեrիքյնազ ընըմավ մին կնգա մին մաղաr տղա յա ընիս, անըմը Մոսի։ Մոսի, հինչ Մոսի՛, աստուծ ընդrա կուռնեrեն ղուվաթ տա՛։

---

[1] *Տումի գյուղի խոսվածքում, որով գրի են առնված այս և հաջորդ հեքիաթները, r հնչյունը գործածությունների ճնշող մեծամասնության մեջ փոխել է իր որակը. Նրա արտասանության ժամանակ լեզվի ծայրը բոլորովին չի հպվում առաջաքիմքին և չի թրթռում, այլ փոքր-ինչ բարձրանում է վեր՝ իր և քիմքի միջև ստեղծելով ազատ բացվածք, որի հետևանքով էլ նրա արտասանությունը խիստ թուլացել է։ Ր-ի այդ արտասանությունը գրության մեջ նշել ենք արամյան r-ով —Տառ. խմբագրի։*

Մոսին լՀա խոխա վրխտանց ա ըրվրցնես իլալ, վեր մրծանա, շատ ղոչչաղ ա իննական։ Ամմա ընդրա մարը Հերիքյնաղը, ին էլ ա մին ղոչչաղ կնեգյ իլալ։

Վեր Մոսին իլալ ա, հրրվանեն կընեգյըն էլ մին ախչիգյ ա պերալ։ Ըտահանք հրրևան-հրրևան ուրուր խոսք ըն տա՞ս, վեր հիբը ըտահանք մրծանան, ուրուր նհետ փսակին։

Շատ ա ընցնես, խրեգյ ա ընցնես, խոխեքյը մրծընաս ըն։ Բիդի հրրսանեքյ անին, ախճիգյը հրսած-փրսած ա ինիս, Մոսին էլ տրղամարթ, ամմա Մոսին ուղիս չի, վեր հրրսանեքյ անե։

Մարը ըսես ա.— Ա՛ բալամ, հինչ ա քյրեզ պրտահալ, խե՞ հրրսանեքյ չրս ընես։

— Ուղիս չրմ, վեր սրվթա՞ քշերը խանը կընեգյս տանե, նրհետը քոն ինի, էլ հոր ը՞մ փրսրկվես։

Մոսի, հի՞նչ Մոսի, ղարարաղցե... Կոխկը հրստրցրնես ա, կոխկեն չի ընգնես, թա Քյիրսը տրեղան տուրուր կիկյա, Մոսին էլ կոխկեն կընգնե։ Մարը շատ ա մրտրծես, շա՞տ, չափ չիկա՞։ Հընգեր, հրրեվան մին անգյունն ըն ընցնես, վեր Մոսուն փրսակին, ամա՞լ չի կյաս։

Ըխճրկատարը էլ մին ընգյունա՞ն, թա.— Մեր ախճիգյը մրծացալ ա, տընես ըք՝ տա՛ռեքյ, տընե՛ս ըք, ուրուշու յընք տաս։

Մոսին լՀա՞ մին կլոխ վրենն ա կացալ, թա.—Թողեքյ ուրուշու տան, տրեսնամ հո՞ւնց ըն տաս։

Հերիքյնաղն էլ թա.— Բա՛լա, հոր ըս էն մա՞րթին ըխճրկանը վրենը կա՞պալ, ուղիս չրս, թողե ուրուշու տան։

Մոսին էլ, հի՞նչ Մոսի՞, չորան մարթ ըլի՞, կեռած, խրմած, հանց ա ջանավար։

Մարը քյիս ա խանեն կոշտը, թա.— Ա՛ խան, պա իստի պեն կինի՞, էն տղան էն մա՞րթին ըխճրկանը վրենը կապալ ա, էս ա՞ է՞ քանե՞ տարե յա ուրուր նհետ հրրվրնոթուն ընք ընես, աշխարքը գյիդա՞ս ա՞, վեր մուք էն մա՞րթին ըխճրկանը վրենը կապալ ընք, վեր հի՞նչ բիդի Մոսին տանե, ամմա մրհենգյ էտ տղան վրենն ա կացալ, թա յրես հրրսանեքյ չրմ ընես, խե՞ հրրսանեքյ անիմ, վեր իմ քախցր թիքյան բիդի խանը օտե։ Պա, մրհենգյ հինչ անի՞մ, վեր ճուրը ընգիմ, հրշտեղ քյինի՞մ, հի՞նչ վրեղ կլխես տամ։

Խանը թա.— Քյինի, ուռութանա քշերավ ուրա՞ն ըղարկե, կյա։

Մարը քյիս ա տոն, հունցու վեր խանն ա ասալ, ինգի էլ ինքյն ա Մոսուն ըսես, թա.— Խանն ասալ ա, վեր թողե քշերավ, ինքյը կյա իմ կոշտրս։

Մոսին թա՝ լավ։

Ուտութանա քշերավ, Մոսին եր ա կընաս, առանց հաց ուտելու, մին մըհակ յոր ունես, ընգես հրղեն, դե գյիդաս ըք ըլի՞, վեր խիլլա հրղե յա՞, կյետնըյեր, կյետնըյեր քյիս ա դուզ խանեն տոնը։ Ամմա գյիդաս ը՞ս հինչ կա՞, էտ ղոչչաղը հրմընչիս չի, նի յա մընեես տոնը թա չէ, ըսես ա.— Խե յը՞ս ինձ ծեն տրվալ, խա՛ն։

— Հալբաթ մին պեն կա ըլի՞, վեր ծեն ըմ տրվալ։

— Հինչ կա՞։

— Թայդի մե ընդել, հալա դինչաց, յրետնան կասիմ։

— Չէ, ուղիս չըմ, մըհենգյ ասե.

— Քըշերըս բիդի քյընիքյ Պուղուս աղեն սպանիքյ, տավարը պիրիքյ, կրկյա՞ս, թա չէ։

— Չէ՛,

— Խե՞։

— Ցրես ուղիս չըմ մարթ ըսպանիմ, համ էլ, խե աշկրտ ծա՞կ ա, խա՛ն, պա համոթ չի՞։ Էսքան հարուստ ըս, էսքան շընթկնեն քունն ա, լոխ քյզանա վրխես ըն, լոխճին հրստոթունը տընես ըս քու տոնըտ, թըլընես ըս, մըհենգյ էլ էն խրեղճեն նհետ հինչ կո՞րծ օնիս, պա մեխկը չի՞, հի՞նչ օնե, լհա՞ վհատա վեր անումը աղա յա, մրեծ հրրստոթուն օնե, յա քու հրստոթունըտ խրրեգյ ա՞, դե՞... Ամմա, գյիդաս ըս հի՞նչ կա խա՛ն, քյզանա առաչ էլ շատ հարուստ մարթիքյ ըն ըլա՞լ, էլհա քյրեզ նըման իտի աշկը ծակ, ըշխարքաս հինչ ըն տա՞ռալ, ըտրանք մրեռալ ըն, ընդրանց տոնը, տրեղը մնացալ ա ուրուշու։ Մըհենգյ տու վրս, մըհենգյանց տենը շատ ապրիս, մի քանե տարե, խե յը՞ս աշկրտ ծակ պրհես է՞, աշխարքը քյրեզ ուշունց ըն տաս. մինը թա կյառրս տարավ, մինը թա դանաս տարավ, մինը թա լավ ծիս տարավ, մինը թա կյումաշրս տարավ, մինը թա ցորենրս տարավ, մինը թա թաղա շորերրս տարավ, մինը թա բաղրս խլից, մինը թա արխեն ճուրը կտրից, բաղրս չուրացավ, մինը թա շատ խարշ ա ունքյ ունես, մինը թա կընեգյրս տարավ, մինը թա տոնրս քանդից, մինը թա վրեղերրս խրլից...։ Ուրանց էլ հինչ մնա՞ց տակեն, էլ թուղես չրս, թա մասուլը վրհաքին, առաչ քունրն ըս վհաքել տաս, ետնան ուրանցը, ին էլ ետ ա ընգնես, լոխ փուչունաս, քյիս։

Խանն ըսես ա.— Գյիդաս ը՞ս հինչ կա, մրհետե քաշը ուրան ճուտերեն, վեր մրծացալ ըն, ուղիս ա իլալ թրուչրցնե, մարը ըսկսալ ա քարոզ տալը, թա գյիդաս ըք, հի՞նչ կա, թա. «Հինչ կա, ա մարդ։ Թա. «Վեր քյընիքյ, վեր մարթ տրեսրնաք, հիրը վեր մարթը կրռանա,

հալբաթ ուզիս ա քար յոր օնե տափան, տուք թրոչեցեքյ, փախեքյ։ Ճօտերն ըսես ըն. «Պա, բալի քարը ջուրումըն ա, իսկյի կըռացավ վեչ, էն վախտը հունց գյի՞դանք»։ Մարը թա. «Տուք ինձանա շատ ըք գյիդաս, քյըեցեքյ»։ Մըհենգյ տու վրս, տու շատ պեն ըս գյիդաս, յըեք օրուշ պեն խոսիքյ, կլոխըտ կտրըլականը՝ կտրըլական ըմ, ամմա հալա տրեսնամ հինչ ըս ըսես։

— Դե տու վրս ծեն տրվալ, ասե, տեսնամ խե՞ յրս ծեն տրվալ։

— Ասի՞մ, խե՞ յրմ ծեն տրվալ։

— Ասե։

— Խե մարթին ախճիգյը տնե՞ս չրս։

Ըստեղ Մոսին մին պատառ սուս ա ընես, յրետնան ըսես.— Խե՞, տու գյիդաս չը՞ս, խան։

— Վեր ասիս կգյիգամ։

— Տանիմ, հի՞նչ անիմ, վեր տանիմ, սրվթա քշերը տու բիդի քոն ինիս նհետը, ընդրանա ետը հի՞նչ ըմ ընես։ Ցրես ուրուշու թրքյա լուզողը չը՞մ։

— Կյիժ-կյիժ խոսել մե, քոմը տանել չըմ, քյնի էն մարթին ախչիգյը տար, հալամ հըրսըքավրտ էլ ինձ ծեն տու։

— Տրես, խան, վեր իտի մին պեն պտահե, յա յրես բիդի մնամ ըշխարքըմրս, յա տու։

Մոսին ըտի յա ըսես, պրծընես, տուս կյաս, քյիս։

Մին շերեթ ընցնես ա թա չէ, էտ շենըմը ուրխոթուն ա ընգնես, թա Մոսին հըրսանեքյ ա ընես։ Էտ շենըմըն էլ լոխ սիրիս ըն Մոսուն, ընգրա հրետե, վեր ղոչչաղ ա, վախ չօնե, սըրտավ ա, քանեքանե հետ ա կյողերան շենին տավարը խիլա, թուրքերեն ծեռքան հրյերեն ըխճրկերքյը ըզադալ, հալամ ըսես չըմ, վեր հիշքան ա քյիսիբնուն քյոմաղյ ինիս իլա։

Մըհենգյ մեր Մոսին, հրվրտացած, վեր խանը խոսկ ա տվալ, վեր կնեգյը տանիլ չի, հըրսանեքյ ա ընես, մին օր, մին քշեր։ Լհա վեր հըրսանեքյը պըրծընես ա, մըն էլ ա տրսնաս, մին յասաղուլ յրեկավ ուրանց տռանը վեր յրեկավ, մին թոխտ ծերքեն։ Թոխտը պեց ըն ընես, տրսնաս, վեր խանն ա կյրալ, թա թաղա հարթնեն ըղրրկեցեքյ, կյա։

Հի՞նչ անե, հի՞նչ չանե՞, Մոսին մնաս ա մըտրծե՞ս. «Չէ, յրես կնեգյրս ըղրրկես չըմ», համ էլ մորը, թա. «Տրեսե՞ր, ազի, խանը հինչ օյին պերից կլոխրսա»։

Մարն էլ թա.— Բալա, հինչ ա՞նիմ։

Դե գյիդա̈ս ըք իլի՛, վեռ փիս խաբառը ճելլի յըն հսկընաս, լա̈վը՝ յըետե։

Շենին չհընեն հըվըքվես ըն, թա.— Մոսի, պա մունք գյիգացալ ընք, թա խանը խոսկ ա տուվալ քու կնեգյըտ տանե վեչ, էտ հունց ա՞ պըտահալ։

Մոսին, թա.— Գյավուռ մարթին մհառ հի՞նչ...։

Թոխտը ստընաս ըն թա չէ, էտ օռախ մարթիքյ փուխվես ըն։ Մոսին էլ ուըթում ա ուտես, ըսես.— Մին ա̈, յըես ուռա̈ն քշտեն խոսկըս ասալ ըմ, հունց վեռ ասալ ըմ, օռենքյ ա, վեռ յա յըես բիդի մնամ, յա ինքյը, հիբը մըզանա մինս մըեռ խոսկը կըղառինքյ վեչ։

Ցասաղուլը տըղանը սպսես ա պատասխանեն։ Մոսին, վեռ տըեսավ յասաղուլը քյիս չի, քյիս ա ըսես.— Քյինի, կըղառկիմ։

Ցասաղուլը քյիս ա, խանեն ըսես, թա.— Ասալ ա՝ կըղառկիմ։

Օռը մըթնես ա... Վախտը մուտընաս ա։ Վեռ մըթենը ընգավ, Մոսին եռ կացավ ուռա̈ն կընգանը փըսակեն շո̈ռեռը կյըեց՛ավ, կլո̈խը շո̈րա̈վ փըթաթի՛ց, տակավըն էլ մին լա̈վ խանչալ կապից, քյեցավ խանեն տոնը։ Խանը տեսավ, հի՞նչ տեսավ, մին պեցիռ բոյավ, մըեծ-մըեծ ըշկեռավ, սեռուն կնեգյ ա։

Խանը թա̈.— Նի մըետ էն օթաղը, կյաս ըմ։

Մոսին, վեռ տեղ հըսավ, մըթեն առ։ Նի մտավ օռո̈ւշ օթաղ, պառանց ընգավ, փադի կառավաթեն յռա, խանչալը ծեռքեն, սպըսես ա, թա խանը հիբ նի կըմննե։ Խանը կեռած, խմած, քյեփը քյոք, բեղեռը սղըլիլավ տոռնը պեց ըռավ, նի մտավ օթաղը, լհա̈ նի մտավ, թա̈ չէ, աշկեռը տես-տեն ըռավ, մին լա̈վ հա̈ղից, հունց վեռ կեռած, խմած ծի ինի, վեռ բուըգա̈ն տանիս մին օ̈ռո̈ւշ կյուռ, վըխճառեն մաչը, յա վըեռցակ ինի՛, վեռ բուըգա̈ն ծեռքան տուս ա̈ պըծընես, թըռչիս, սկսես ա պեցիռ կըչկըչալը, կա̈նչիլը։

Զոխան հընես ա, կախ տաս պատան, փափաղըն էլ մին օ̈ռուշ տըեղ ա կախ տաս, վըեննեռը հընես, շո̈ռեռը հընես, թա̈ղա̈ղա̈ն պոկը թիմըղցընես, բեղեռը սղըլիլա̈վ, յոռղանը պըցիռցնես, նի մննես հառթնանը ծոցը։ Լհա̈ ուղիս ա թա̈ հառթնանը նհետ հինչ անե՛... Մոսին շոռ ա կյաս, պատռաստ խանչալը մին ղո̈նըմ խանեն պըկավը քըշիս։ Խանը վեչ ծեն ա հընես, վեչ մին պեն, հոքյին տաս ա։

Մոսին էլ, յըեր ա կընաս, կընգանը շո̈ռեռը հընես, ուռա̈ն շուռեռավը տոն կյաս, հանց տուս ա կյաս, վեռ վեչ մինը գյիդա̈ս չի՛։ Քյիս ա տոն, ըսես.— Աղի, յըես էս շենան քյիննական ըմ օռուշ շեն։

Մառը՝ թա.— Խե՞։

— Լհա̈ ընդի։

Մոսին թուղես ա ո̈ւխա̈նց շենը, կնեգյը յօռ ունես, քյիս օ̈ռո̈ւշ տըեղ, կլո̈խը ղըլմըղալա հըեռե պըհելու մհառ։

Էհ՜, շատ վախտ ա ընցալ էս պենան, ամմա ժուղովուրթը միշտ էլ Մո̈սո̈ւն անըմը մըննան քցիս չի։

Հա՛, մըննաս ընգավ ասիմ, խանեն վեռ սպնես չի՞ Մոսին, գո̈ւզ ա, մին քանե օռանը յըետը թա̈ղա̈ն ըլա̈վ, ամմա ընդռա մնան փիսը չըլա̈վ։ Համ էլ մին խիլլա̈ վախտ շատ շհիլնե ո̈ւխա̈նց կնանոցը տա̈ռըն իլա̈ն, լհա̈ սվթա̈ քշեռան, էտ վըխտանը տեսը, էլ խանը վըխեցավ, ղոշշաղ տըղեռանց կնանոցը ծեռք չըտըվավ։

Մըհենգյ, բա՛լա շան, ըշխառքես կործը ըտի յա՞, թա ղոշշաղ ը՞ս, քյզանա կըվախին, թա̈ թո̈ւլ ըս, վըեննու տակե քյիննա̈կա̈ն ը՞ս։

Մեռ ժուզովուրթը ըսես ա.— Տու փիսո̈թո̈ւն մե անել սըվթա̈, ամմա վեռ տեսնըմ ըս քյըեզ ուղիս ըն փիսո̈թո̈ւն ա̈նին, ուղիս ըն վըեննատակ քըցին, ճելլ ըռա, տու ո̈ւխա̈ն քըցի։

—Դե, Վա՛նես շան, հո՜ ըռա, քշի՜ յըեղնեռը, յըեզանը օսին մատա՜ղ, ղոշշաղ տըղեն խընչալեն մատա՜ղ, փիս մարթեն հա̈ռը շոն տըեռնա՜, մեռ ջհիլնեն ո̈ւրա̈նց կնանոցը տա̈ռ տըեռնան[1]։

---

[1] Հաջորդող հետևյալ նախադասությունը բանասացի հավելումն է (Ս.Կ.).
— Ա՛ հընգեր վարժուհի, մըհենգյ Մո̈սո̈ւն անա հիշքան խոսացե, հա̈լա̈ մին կյիռի՜, տանը էլհա թաղա պենեռ կասիմ, կյիռիս։ Էքյուց էլ կըկյաս, օռո̈ւշը կասիմ։